



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԿԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ ԿԱՏԱՐԵՑ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Օգոստոսի շաբաթավերջին, տօնական մթնոլորտ ստեղծուեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ յարկին տակ:

Շաբաթ երեկոյ, տեղի ունեցաւ նախատօնակը: Զահանայ հայրերը եւ սարկաւագները, աղօթքներով, սաղմոսներով եւ մեր հոգեպարար շարականներով, գեղեցիկ պահ ապրեցան, իսկ այնուհետեւ մեր բարեպաշտ հաւատացեալ ժողովուրդին հնարաւորութիւն տրուեցաւ ունենալու խոկումի, աղօթքի եւ հոգեւոր երգեր երգելու պահ՝ մինչեւ ուշ գիշեր:

Յաջորդ օրը, Օգոստոս 15-ի առաւօտեան, մեր բարեպաշտ ժողովուրդը, խանդավառութեամբ եկեղեցի հասաւ: Նկատելի է երկիւղածութիւնը եւ ջերմեռանդութիւնը մեր հաւատացեալ ժողովուրդին, որ աւանդաբար ակնածանք եւ մեծ յարգանք կը տածէ դէպի Ս. Կոյսը: Առաւօտեան, ժամը 9:30-ին սկսաւ ժամերգութիւնը՝ այս տօնին յատուկ շարականներով, իսկ խորանը զարդարուած էր ծաղիկներով: Աւելի ուշ, Ս. Պատարագը սկսաւ «Յրաշափառ»ի երգեցողութեամբ. պատարագիչն էր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ թափօրով, խաչի, մոմակիրներու, սարկաւագներու, բուրվառակիրներու ուղեկցութեամբ մուտք գործեց եկեղեցի ու յառաջացաւ դէպի խորան: Հոգեգմայլ էր պատարագը հաւատացեալ ժողովուրդին համար, որ նաեւ լսեց Առաջնորդ Սրբազանին պատգամը: Սրբազան Հայրը գեղեցկօրէն դրուատեց Մարիամ Աստուածածնի՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Զրիստոսի մօր առաքինութիւնները, նշելով, որ ան Ս. հոգիով յղացած եւ մաքրամաքուր կեանք մը կերտած էր, եղաւ իւրայատուկ չափանիշը մայրութեան, ժուժկալութեան, մաքրութեան, զոհողութեան, խոնարհութեան եւ մաքրակեցութեան: Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ իր պատգամին մէջ նշեց հայ կնոջ եւ մօր դերը՝ մեր անցեալի եւ ներկայի կեանքին մէջ, ընդգծելով, որ ան միշտ եղած է պատնէշի վրայ, ըլլայ այդ օրհասական պահ կամ փառաւոր ժամանակահատուած, եւ ի զուր չէ որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը այս տարին հռչակած էր »Հայ Կնոջ Տարի«: Այս առթիւ, Առաջնորդ Սրբազան Հայրը կոչ ուղղեց մեր

Ժողովուրդի մայրերուն եւ քոյրերուն, որ Մարիամ Աստուածածինը իրենց համար դառնայ լոյս եւ փարոս իրենց կեանքին ընթացքին: Այս բոլորը խոկումի գեղեցիկ պահ մը շնորհեցին հաւատացեալ ժողովուրդին:

Իսկ պատարագի աւարտին, խաղողի օրհնութիւն տեղի ունեցաւ, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազան Զօր, եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ բաշխուեցաւ հաւատացեալներուն:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AND BLESSES GRAPES AT ST. MARY'S CHURCH ON THE FEAST OF THE ASSUMPTION**

On Sunday, August 15<sup>th</sup>, 2010, the Feast of the Assumption of the Holy Mother of God was ceremoniously celebrated in all Prelacy Churches with Divine Liturgy and the blessing of grapes.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale where hundreds of faithful had gathered to participate in the spiritually uplifting service and in the festivities of the day.

With the singing of the "Hrashapar" hymn, the Prelate entered the church and ascended the altar to celebrate Divine Liturgy.

In his sermon, the Prelate exalted the life and virtues of St. Mary and her role in God's great plan to save mankind. Through her purity, righteousness, humility, and sacrifice, she became the ideal for what it means to be a mother, said the Prelate, and encouraged the women in attendance to look to St. Mary as their example and guide.

The Prelate also lauded the role Armenian woman have had and continue to have in our religious and national life, noting how very fitting it is that H.H. Catholicos Aram I has dedicated this year to women by proclaiming 2010 the Year of the Armenian Woman.

At the conclusion of the service, the Prelate conducted the blessing of grapes, which were then distributed to the faithful.